2021-2022 ուստարվա III^գ դասարանի կատարած աշխատանքների

հաշվետվություն

2021-2022 ուստարվա սեպտեմբերից III^գ դասարանում սովորել են թվով 35 աշակերտ՝ 21 աղջիկ, 14 տղա:

Դասարանում չկան ԿԱՊԿՈՒ աշակերտներ:

2021-2022 ուս. տարվա սեպտեմբերին անց է կացվել դաս նվիրված ՀՀ անկախության օրվան:

2021-2022 ուս. տարվա դեկտեմբերին «Բաց արա թերթերդ, տեսնենք հրաշքներդ» թեմատիկ խմբի ուսումնասիրությանը զուգահեռ իրականացվել է «Բնության հրաշքները» խորագրով նախագիծ: Աշակերտները ուսումնասիրեցին և ճանաչեցին հայկական լեռնաշխարհի հարուստ ու բազմազան բնությունը:

2021-2022 ուս. տարվա դեկտեմբերի 25-ին կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Երևան: Երեխաները եղան Պլանետարիումում, Մատենադարանում, ինչպես նաև Երևանի դրամատիկական թատրոնում դիտեցին ամանորյա ներկայացում:

2021-2022 ուս. տարվա փետրվարի 18-ին կազմակերպվել է դաս՝ նվիրված Հովի. Թումանյանի ծննդյան 153 ամյակին և գիրք նվիրելու օրվան:

2021-2022 ուս. տարվա փետրվար և մարտ ամիսներին «Հայրենիք, ես մի զարկն եմ քո բազկի» թեմայի ուսումնասիրությանը զուգահեռ իրականացվել է նախագծային աշխատանք, ակտիվ մասնակցություն են ունեցել բոլոր աշակերտները:

2021-2022 ուս. տարվա ապրիլի 7-ի նախաշեմին տեխնոլոգիայի դասին երեխաները իրենց մայրիկների համար պատրաստել են անակնկալ նվերներ՝ կոճակներից թևնոցներ:

2021-2022 ուս. տարվա ապրիլի 13-ին կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Երևան: Երեխաները եղան Հովի. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում, դիտեցին «Չոփչոփիկը» ներկայացումը, եղան և շատ հագեցած էքսկուրսիա ունեցան Լուսիկ Ագուլեցու տուն-թանգարանում:

2021-2022 ուս. տարվա ապրիլին III^{գ} դասարանի աշակերտներն իրենց մասնակցությունն են ունեցել Հայոց Մեծ Եղեռնին և Սուրբ Հարության տոնին նվիրված համադպրոցական միջոցառումներին:

2021-2022 ուս. տարվա մայիսի 30-ին Ես և շրջակա աշխարհը և տեխնոլոգիա առարկաներից կազմակերպվել է գործնական աշխատանք «Սննդամթերքի նշանակությունը մարդու կյանքում» թեմայով:

Ողջ ուսումնական տարվա ընթացքում անց են կացվել դասղեկի ժամերը:

2021-2022 ուս. տարվա հունիսի 4-ին կազմակերպվել է տարեվերջյան էքսկուրսիա դեպի Գառնու հեթանոսական տաճար, Գեղարդ վանական համալիր և, իհարկե, հանգիստ բնության գրկում:

2021-2022 ուստարվա վերջում դասարանի աշակերտների թիվն անփոփոխ է մնացել՝ 35 հոգի՝ 21 աղջիկ, 14 տղա:

2021-2022 ուս. տարվա վերջում III^{գ} դասարանի աշակերտներից 12-ը գերազանց են, 14-ը՝ հարվածային, 9-ը՝ միջակ:

2021-2022 ուս. տարվա վերջում III^{գ} դասարանի որակական առաջադիմությունը կազմում է 74%:

2021-2022 ուստարվա համար նախատեսված ծրագրային ուսումնական նյութը երեխաները յուրացրել են: Բոլոր աշակերտները առաջադիմում են:

Դասարանի աշակերտների միջև տիրում է ընկերական մթնոլորտ: Աշակերտները մեծ սիրով են մասնակցում ուսումնական գործընթացին:

Դասվար՝ Ն. Սեյրանյան